

Համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի 53-րդ հոդվածի 10.1 կետի և ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2022 թվականի օգոստոսի 17-ի «Հարկային պարտավորությունն ավելացնող և (կամ) հաշվանցվող (պակասեցվող) գումարը նվազեցնող հարկային հաշվարկների (այդ թվում՝ ճշտված հարկային հաշվարկների) ներկայացման կարգը սահմանելու մասին» N849-Ն հրամանի. «Որևէ հարկատեսակի գծով հարկային պարտավորությունն ավելացնող և (կամ) հաշվանցվող (պակասեցվող) գումարը նվազեցնող հարկային հաշվարկի (այդ թվում՝ ճշտված հարկային հաշվարկի) սույն կարգին համապատասխան էլեկտրոնային եղանակով ընդունման ծրագրային ապահովման առկայության մասին հարկ վճարողներին իրազեկումն իրականացվում է հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում տեղեկատվություն հրապարակելու միջոցով»:

Հաշվի առնելով վերոնշյալը հայտնում ենք, որ հարկ վճարողները կարող են ներկայացնել հետևյալ հաշվարկները՝

Հաշվարկի անվանումը	Հաշվետու ժամանակաշրջան	Հաշվարկի կոդը	ՀՆԷ համակարգում հաշվարկի համարը
Ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկ / Unified calculation report of Value added tax and excise tax	2018-2019թթ.	14	203
Ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկ (2020 թ.-ից)/ Unified calculation report of Value added tax and excise tax	2020թ.-ից	1m	260
Եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկ	2018թ.-ից	11	189
Ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի շահութահարկի հաշվարկ	2018թ.-ից	18	240